ՄԱՆՐ ԳԻՏԵԼԻՔ

ԱԶԳԱՅԻՆ ԿԱՄ ՀԱՅԱԽՕՍ ԱՌԱԾՔ

ԵՐԵԽԻՆ բան գէր, հետը գնա:
Երեխէն մշտնայ, մեծը կշտանայ:
Եադը (դէնէ, բէնած) գնալով գալով բարեկամացաւ, բարեկամը չգնալով չգալով եադացաւ:
Եօրղանիդ կեօրա ոտներդ մեկնիր:
Ջարարի կլաիցը յետ դառնալը՝ փայտա այ:
Էծը իր ոտքովը կախ կըտան, ոչխարը իր:
Էշը վեր ելլելը մի ամօթ, վեր գալը երկու:
Էշը խծի համար լաւ այ, քան զմի սուրբ ոչխար:
Էշը ընկաւ գարու հորը, ասաց՝ էս լաւ ա քան իմ ախոռը:
Էշն ի՞նչ գիտա նուշըն ի՞նչ ա:

ԲՆԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ԽՆՁՈՐ պարապ գաւաթի մը մէջ ձ'երմակ սառկ մը դնելով քիչ մը հեռուէն այն սառկը չտեսնուիր, և գաւաթին մէջ ջուր լեցունելով կը տեսնուի.

— Վասն զի թէ որ գաւաթը պարապ է սառկէն ելած լուսոյ ճառագայթները գաւաթին չըրթունքէն կ'արգելուին ու չեն կրնար ուղիղ գծով ինչուան դիտողին աչքն հասնիլ. ընդհակառակն գաւաթին մէջ ջուր լեցունելով սառկին լուսոյ ճառագայթները նախ ուղիղ գծով ջրէն կ'ելլեն. բայց օդուն մէջ մտնելով, այսինքն խտագոյն միջնորդէ մը անօսրագոյն միջնորդի մը մէջ մտնելով առաջին ուղղութենէն կը շեղին ու խոտոր գծով դիտողին աչքը կը հասնին:

ՊԱՅՄԱՆ ԿԵՆԱՑ

Ա՛ՂԷ՛, պայման կենաց դու զո՞ր ընտրեսցես.
Վէճք յատենի և տաղտկութիւնք մնան քեզ.
Հոգք և զբաղմունք անթիւ գուցեն տանընին.
Պէսպէս երկունք տաժանեսցիս 'ի յանդին.
Ահ 'ի ծովու. Թէ ինչք ունիս՝ խէթ յուղւոջ,
Թէ անարծաթ՝ տագնապեսցիս 'ի յոգւոջ:
Կի՞ն ածիցես, այլ ոչ կեցցես անկասկած.
Անկի՞ն լիցես, մնայցես մեկնակ և անկած:
Որդէ՞ք լիցին, գառնասցի տաղտաքո զըւարթ.
Թէ անզաւա՞կ՝ կեանքդ են թափուր և աղարտ:
Մանկութեան չէք պարտուպատշաճքն հանճար.
Եւ ծերութիւն անօգնական է տըկար:
Ընտրեա զերկուս. կամ մի՛ զարև տեսանել,
Կամ թէ ծընեալ՝ 'ի նոյն ըղկեանս անարգել:

ՊՈՍԻՏԻՊՊՈՍ

Ջ՚ՈՐ և հաճիս կենաց պայման ընտրեսցես.
Փառք յատենի, շուք առ գիտունս մնան քեզ.
Ի չինի բերք բնութեան, հանգիստ առ տընին.
Եւ թէ նաւես՝ շահըս գտցես յանդնդին.
Փառս յընկերաց գտցես ընչիւքդ 'ի յուղւոջ.
Թէ անարծաթ՝ չարկցես ումեք խէթ յոգւոջ.
Թէ կին ածեր՝ ահա ոչ ևս կեաս անկած.
Թէ կեաս անկին՝ տեսցես աւուրս անկասկած:
Մանկունս ունել պարարտ տանէ և զըւարթ.
Եւ անորդին կեանըս վարէ անաղարտ:
Մատն և բաժին է պատանեաց ոյժ և կար
Եւ ծերութեան կան ձեռընտու և պատկառ:
Ծնանել ընտրեաց և մի ըղձահ տեսանել,
Երբ զամենայն վիճակ գըտեր անարգել:

ՄԵՏՐՈԴՈՐՈՍ

ԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

Վասն 'ի վերայ ջրին գնալոյ:

ԵԹԷ կամիցիս գետ անցանել և 'ի վերայ ջուրցն գնալ, որպէս 'ի վերայ ցամաքի, որ ոչ թացցի ոտք 'ի ջուրցն, շինել տուր երկու խարպուզ 'ի փայտէ, թանձր և ամուր. 'ի ներքին ծակոնք և 'ի վերան կաշու տեղն, անարատ կաշի մի. որ ջուրն բնաւ չանցանի 'ի ներսի կողմն: Եւ երկու զարպուզին 'ի յոտիցըդ առկըն պինդ և ամուր կապէ որ բնաւ չի խաղայ 'ի ներքոյ ոտիցդ և առ երկայն ձող մի 'ի ձեռդ, կամ երկայն նիզակ մի, և գնայ 'ի վերայ ջրին, և 'ի վերայ գետերոյն անցս առնելով. զի ոչ թողու օդն որ 'ի մէջ տախտակոյ ծակոցն կայ մտել 'ի ջուրն, և ցողն 'ի ձեռինդ զծանրութիւնդ յինքն առնու. և այնպէս թեթև գնաս 'ի վերայ ջրոյն որպէս 'ի ցամաքի:

Եւ զայս բազում անգամ փորձեալ են 'ի յանգս և 'ի հունս գետոյ: Եւ թէ ջուրն սակաւ մի խորին լինի և խաղաղ կամ կանգնած՝ այլ հանգիստ գնան 'ի վերայ:

ՈՍԿԻՓՈՐԻԿ

ՀԱՆԵԼՈՒԿ

ՇԻՆՈՒԱԾՆ է միակ
Բուրգըն բոլորակ,
Հազար մէկ գռնակ,
Հազար մէկ պահնակ:

ՄԱՐՏԻ ՀԱՆԵԼՈՒԿՆ ԻՐ ՄՐՋԻ՞Ն:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ